**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/CIVIL PROCEDURE/
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-75

ՆԱԶԵԼԻ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ
«Դե Յուրե Քնսալթինգ» փաստաբանական և հաշտարարական գրասենյակի ղեկավար,
«Դե Յուրե» իրավապաշտպան ՀԿ նախագահ,
Մ. Մաշտոցի անվան համալսարանի դասախոս

NAZELI TER-PETROSYAN
Head of "De Jure Consulting" Law and Mediation Firm,
President of "De Jure" Human Rights NGO,
Lecturer at M. Mashtots University

НАЗЕЛИ ТЕР-ПЕТРОСЯН
Руководитель адвокатской и примирительной конторы «De Jure Consulting»,
председатель правозащитной НПО «De Jure»,
преподаватель Университета им. М. Маштоца

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

FEATURES OF THE EXAMINATION OF PROCUREMENT DISPUTES

ОСОБЕННОСТИ РАССМОТРЕНИЯ СПОРОВ О ЗАКУПКАХ

Ներածություն

Գնումների վեճերը կրում են առանձնահատուկ բնույթ՝ կախված ոլորտի վերաբերյալ օրենսդրական հատուկ կարգավորումներից: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում ամրագրված են գնումների վեճերի վերաբերյալ քաղաքացիադատավարական նորմեր, որոնք բովանդակում են պետական գնումներին առնչվող իրավակարգավորումներ:

Այս նյութում կներկայացնենք գնումների գործընթացի էությունը, գնումների ընթացակարգերի տարանջատման կարևորությունը, դրա արդյունքում առաջացած վեճերի քննման առանձնահատկությունները և լրացուցիչ իրավական կարգավորում պահանջող հարցերը:

Հիմնական հետազոտություն

Դեռևս 4-րդ դարում Հին Հռոմում լայն տարածում են գտել այսպես կոչված «պատարագներ»-ը, որոնց շրջանակում պետությունը պարտադրում էր իր հպատակներին որոշակի սոցիալական գործառույթներ և բեռներ, ընդհուպ մինչև և ներառյալ հարկադիր աշխատուժ,

տրանսպորտ, պետական կարիքների համար նախատեսված պարագաներ և այլն[1]:

Ռուսաստանում պետական պայմանագրերի կնքման հետ կապված իրավահարաբերությունների նորմատիվ կարգավորումը սկիզբ առավ Պետրոս I-ի թագավորության օրոք: Նախևառաջ սա կապված էր պետության սոցիալ-քաղաքական և տնտեսական կյանքի շարունակական բարեփոխումների հետ: 18-րդ դարի սկզբին ձևավորվեց համառուսական կենտրոնական կառավարության ապարատը, որը ենթարկվում էր Սենատին, և գործում էին մի շարք գրասենյակներ, գրասենյակներ և հրամաններ, որոնց լիազորությունները ներառում էին պետական գործունեության տարբեր ոլորտներում հասարակայնության հետ կապերի կարգավորումը[2]:

Հայաստանի Հանրապետությունում սկսած 2000 թվականից ընդունվել է գնումների ոլորտը կարգավորող թվով 4 օրենք:

Ներկայումս գործում է 2016 թվականին ընդունված «Գնումների մասին» օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք), որը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

Օրենքի կարգավորումից բխում է, որ գնման գործընթացը՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, որը ներառում է նաև՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքը նաև սահմանել է բացառություն որոշակի գործարքների համար, որոնց համար կիրառելի չէ Օրենքի գործողությունը:

Դրանք են աշխատանքային պայմանագրերը, օրենքով նախատեսված դեպքերում քրեական, վարչական կամ դատական վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց որոշումներով նախատեսված կոնկրետ անձանց կողմից մատուցվող ծառայությունների ձեռքբերումը, պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ կոնցեսիայի այն գործարքները, որոնք կարգավորվում են «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքով և այլն:

Այլ կերպ ասած՝ գնման ընթացակարգերը կարելի է տարանջատել երկու խմբի՝ ազգային կամ Օրենքով իրականացվող գնման ընթացակարգեր և միջազգային փաստաթղթերի հիման վրա իրականացվող գնման ընթացակարգեր:

Նմանօրինակ տարանջատման հիմք է հանդիսանում ոչ միայն Օրենքի կարգավորումը, այլև տարաբնույթ ոլորտների զարգացման կամ բարելավման համար ստացված վարկային միջոցների կամ դրամաշնորհների վերաբերյալ կնքված համաձայնագրերում տրված կարգավորումները:

Նմանօրինակ կարգավորում է արձանագրված Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում (apl-2)» վարկային համաձայնագրում (վարկի համար 7987 AM), որի 3-րդ բաժնում հատուկ դրույթ է ներառվել ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր ապրանքները և աշխատանքները պետք է գնվեն Գնումների ուղեցույցի I բաժնում սահմանված կամ նշված պահանջների և սույն բաժնի դրույթների համաձայն՝ Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորման ենթակա բոլոր խորհրդատվական ծառայությունները պետք է

[1] *Карапетов А.Г., Савельев А. И.,* Свобода договора и ее пределы: в 2 т. - М.: Статут, 2012, Т. 1, - 452 с.

[2] *Стурза К.И.,* Историко-правовой анализ развития института государственного заказа в России // История государства и права. - 2013. - № 4. - С. 20-24.

գնվեն Խորհրդատուի ուղեցույցի I և IV բաժիններում սահմանված կամ նշված պահանջների և սույն բաժնի դրույթների համաձայն[3]:

Այսպես, 2013 թ. մայիսի 17-ին Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության (այսուհետ՝ նաև ՄԶԸ) միջև ստորագրվել է 22.8 մլն ՀՓԻ գումարի չափով «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագիր»/ «DPCP» ֆինանսավորման համաձայնագիրը (Փոխառություն թիվ 5222-AM)[4]:

ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայքում 2017 թվականի դեկտեմբերի 08-ին տեղադրված հայտարարությամբ նշվել է, որ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել «Բժշկական և ախտորոշիչ սարքավորումների, բժշկական պարագաներ և բժշկական կահույք «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ի և «Արտաշատի ԲԿ» ՓԲԸ-ի համար:

Միաժամանակ նույն հայտարարությամբ սահմանվել է, որ մրցույթն իրականացվելու է «Միջազգային մրցակցային սակարկություն» (ICB) ընթացակարգին համապատասխան, ինչն ամրագրված է Համաշխարհային բանկի «ՎԶՄԲ վարկային և ՄԶԸ փոխառությունների շրջանակներում գնումների ուղեցույցով» (Հունվար 2011, վերանայված՝ Հուլիս 2014)[5]:

2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի (ՎԶՄԲ և ՄԶԸ) միջև ստորագրվել են 30 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով (որից՝ 15 մլն ԱՄՆ դոլարը՝ ՎԶՄԲ-ի միջոցներից, 9.800.000 ՀՓԻ-ն՝ ՄԶԸ-ի միջոցներից) «Կրթության բարելավման ծրագիր»/«EIP» վարկային և ֆինանսավորման համաձայնագրերը (Վարկ թիվ 8342-AM, Փոխառություն 5387-AM)[6]:

«Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակում ՀՀ կրթության նախարարության պաշտոնական կայքէջում «ուսումնասիրություն և գնահատում՝ ներառելով ավագ դպրոցի հաճախելիության բաղադրիչը և ՆՄՀ դրամաշնորհների արդյունավետության ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով 2021 թվականի հունվարի 26-ին տեղադրվել է հայտարարություն: Նշված հայտարարությունում նաև նշվել է, որ կազմակերպության ընտրությունը կատարվելու է որակավորման հիման վրա ընտրության (CQS) եղանակով՝ Համաշխարհային բանկի «Խորհրդատուների ընտրություն և նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքում ՎԶԵԲ-ի վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի Փոխառուների կողմից հունվար 2011թ. /վերանայված հուլիս 2014 թ./ ուղեցույցի համաձայն[7]:

2019 թվականի հոկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է 13,400,000 եվրո գումարի չափով «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում»/«LRNIP AF2» վարկային համաձայնագիրը (Վարկ թիվ 8957-AM)[8]:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պաշտոնական կայքէջում 2021 թվա-

[3] https://www.irtek.am/views/act.aspx?aid=61651.
[4] ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝ https://www.minfin.am/en/content/hamashkharhayin_bank_wb_/#sthash.pGTQujA1.dpbs:
[5] ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնական կայք՝ https://www.moh.am/#1/948:
[6] ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝ https://www.minfin.am/en/content/hamashkharhayin_bank_wb_/#sthash.pGTQujA1.dpuf:
[7] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայք՝ https://escs.am/am/news/7785:
[8] ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք՝ https://www.minfin.am/en/content/hamashkharhayin_bank_wb_/#sthash.pGTQujA1.BSfyNEgs.dpuf:

կանի նոյեմբերի 23-ին տեղադրվել է «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի շրջանակում «Հայաստանի Հանրապետության ճանապարհային ենթակառուցվածքներում բնական աղետների ռիսկերի գնահատման տեխնիկական աջակցության տրամադրում» խորհրդատվական ծառայության ձեռքբերման հայտարարությունը:

Նույն հայտարարությամբ նաև նշվել է, որ ընտրությունն իրականացվելու է Համաշխարհային բանկի՝ «Գնումների կանոնակարգեր ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) փոխառուների համար, հուլիս 2016, փոփոխված նոյեմբեր 2017թ., օգոստոս 2018 թ.» («Գնումների կանոնակարգեր») ընթացակարգի համաձայն[9]:

Այսպիսով, թվարկված բոլոր դեպքերում գնման ընթացակարգերն իրականացվել են ոչ թե Օրենքով, այլ դրանից տարբերվող միջազգային ընթացակարգերով:

Անդրադառնալով թվարկված համաձայնագրերի իրավական կարգավիճակին, հարկ է արձանագրել, որ համաձայն «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի իրավակարգավորման՝ Հայաստանի Հանրապետության և պայմանավորվող մյուս կողմի (կողմերի) միջև մեկ փաստաթղթի կամ փոխկապակցված և միմյանցից անբաժանելի մեկից ավելի փաստաթղթերի տեսքով գրավոր ձևակերպված և միջազգային հանրային իրավունքով կարգավորվող համաձայնությունը՝ անկախ դրա անվանումից համարվում է միջազգային պայմանագիր:

Նույն օրենքով են կարգավորված միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման, հաստատման, չեղարկման ընթացակարգերը:

Նկարագրված օրենսդրական կարգավորումից է բխել սույն դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 02-ի թիվ 501-Ա որոշումը, որով հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը հավանություն է տրվել Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի ստորագրման առաջարկությանը:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համաձայն, վերը նշված որոշմանը հաջորդել է ՀՀ սահմանադրական դատարանի 2020 թվականի մարտի 03-ի թիվ ՍԴՈ-1511 որոշումն այն մասին, որ վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

Վերջնարդյունքում, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 17-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքը:

Սա նշանակում է, որ յուրաքանչյուր դեպքում միջազգային պայմանագրի կնքումը, վավերացումն ու հաստատումն անցնում է հստակ կանխորոշված ընթացակարգեր:

Այս առնչությամբ «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության ստորագրած կամ միանալու ենթակա միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրա-

[9] «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի պաշտոնական կայք՝ https://armroad.am/am/search?keyword=%D5%A3%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80:

վաբանական ուժ է ստանում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելու կամ Հանրապետության նախագահի կողմից հաստատվելու միջոցով:

Վերոնշյալից հետևում է, որ միջազգային պայմանագրի դրույթները պարտադիր են դառնում Հայաստանի Հանրապետության համար դրա իրավաբանական ուժ ստանալուց հետո:

Սույն պարագայում, բազմաոլորտ բնույթի համաձայնագրերում գնման ընթացակարգերի ընտրության ձևի նշումն ինքնանպատակ չէ, այն ենթադրում է գնման ընթացակարգն իրականացնող մարմնի կողմից դրա պարտադիր կատարում:

Ամբողջի հաշվառմամբ՝ եզրահանգում ենք, որ գնման գործընթացները միջազգային ընթացակարգերով իրականացվելու դեպքում կիրառելի չեն կարող լինել Օրենքով տրված կարգավորումները:

Միաժամանակ գտնում ենք, որ միջազգային ընթացակարգերով գնման վեճերը ևս ենթակա են ներպետական դատարանների քննությանը, սակայն որոշակի տարբերակված կարգով:

Օրենքում նախատեսված է, որ յուրաքանչյուր շահագրգիռ անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Միաժամանակ Օրենքում ամրագրված է, որ գնումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ[10]:

Այսպիսով, օրենսդիրը նախատեսել է գնումների վեճերի քննման քաղաքացիադատավարական ընթացակարգ, որի պայմաններում անհրաժեշտ է նաև ուսումնասիրության առարկա դարձնել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է, որ դատարանը հատուկ հայցային վարույթի կարգով քննում է «Գնումների մասին» օրենքով սահմանված գնումների հետ կապված վեճերը[11].

Բացի այդ, նույն օրենսգրքում սահմանված է նաև հատուկ կանոն այն մասին, որ դատարանը քննում և լուծում է «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերը[12]:

Նշվածից հետևում է, որ օրենսդիրը տարանջատել է «Գնումների մասին» օրենքի շրջանակում առաջացած վեճերը գնման այլ ընթացակարգերի շրջանակում առաջացող վեճերից՝ նախատեսելով դրանց քննման և լուծման ընթացակարգ հատուկ կանոններով:

Օրենսդրական նման լրացումը կատարվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 21.01.2022 թվականին ընդունված և 01.06.2022 թվականին ուժի մեջ մտած ՀՕ-7-Ն օրենքով:

«Գնումների մասին» օրենքում ևս կատարվել է լրացում 2022 թվականի հունվարի 21-ին ընդունված ««Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-4-Ն օրենքով:

Հատկանշական է նաև այն, որ ««Գնումների մասին» օրենքում լրացումներ և փոփոխու-

[10] «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:
[11] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ:
[12] ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 1-ին մաս:

թյուններ կատարելու մասին» թիվ ՀՕ-4-Ն օրենքի հիմնավորմամբ արձանագրվել է, որ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների տրամադրած միջոցների հաշվին գնումների կատարման ժամանակ կիրառվում են ազգային ռեժիմից տարբերվող ընթացակարգեր[13]:

Նման դեպքերում հետևում է, որ Օրենքի գործողությունից չբխող գնումների վեճեր առաջանալիս, դրանք չեն կարող կարգավորվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխի կանոններով, քանզի, ինչպես վերը նշվել է, այն վերաբերելի է միայն Օրենքով սահմանված գնումների վեճերին:

Հատկանշական է նաև այն, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածով սահմանված է, որ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

Նշվածի համատեքստում եզրահանգում ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխի կարգավորումները վերաբերում են բացառապես Օրենքի շրջանակում առաջացած գնման վեճերին, քանզի անմիջական մատնանշում է արվում Օրենքին:

Միաժամանակ, այդ դեպքում նույն գլխի առանձնահատկությունները՝ գնման գործընթացի կասեցման և այլնի վերաբերյալ ևս կարող են կիրառելի լինել միայն Օրենքի շրջանակում առաջացած գնման վեճերի քննության դեպքում:

Սույն պարագայում, մեր կարծիքով միջազգային ընթացակարգերով գնումների վեճերով կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր նորմերը, հետևաբար այդ վեճերն ենթակա են քննման ընդհանուր հայցային կարգով:

Հետևաբար, այդ վեճերի քննության դեպքում գնման գործընթացի կասեցման պարտադիր պահանջը բացակայում է:

Նման մոտեցման առնչությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, ԵԴ2/1024/02/24 քաղաքացիական գործով, 2024 թվականի դեկտեմբերի 19-ին կայացրած և 2025 թվականի հունվարի 20-ին ուժի մեջ մտած վճռով արձանագրել է.

«(…) Ինչ վերաբերում է հայցվորի ներկայացուցչի այն դիրքորոշմանը, ըստ որի սույն դեպքում կիրառելի է գնումերի հետ կապված վեճերով գործերի քննության հատուկ կարգը, դատարանը գտնում է անհրաժեշտ նշել, որ նախնական դատական նիստում արդեն արտահայտվել է այդ հարցի շուրջ՝ արձանագրելով, որ սույն վեճը պետք է քննվի ընդհանուր հայցային վարույթի կարգով: Ավելին՝ տվյալ իրավահարաբերության վրա տարածվում է «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման դրույթները, այլ ոչ թե «Գնումերի մասին» ՀՀ օրենքը»:

Այնուհանդերձ, չի բացառվում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում համապատասխան լրացուցիչ կարգավորումների նախատեսման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա ինչպես առհասարակ բոլոր տեսակի գնման վեճերի քննությունն

[13] Ազգային ժողովի պաշտոնական կայք՝ http://www.parliament.am/draft_docs8/K-011_himnavorum.pdf:

իրականացնել բացառապես հատուկ վարույթի միջոցով, այնպես էլ սահմանելու միջազգային ընթացակարգերով սահմանված գնման վեճերի քննության ընդհանուր հայցային վարույթից տարբերվող ընթացակարգ:

Եզրակացություն

Ամբողջի հաշվառմամբ՝ սույն հոդվածում ամփոփվել են գնման ընթացակարգերի տեսակները, գնման վեճերի առանձնահատկությունները, դրանց քննման ընթացակարգերի տարբերությունները և մատնանշվել են հնարավոր գործիքակազմի նախատեսման անհրաժեշտությունը՝ պետական գնման և միջազգային փաստաթղթերով սահմանված գնման ընթացակարգերի արդյունքում առաջացած վեճերի քննման վարույթները միացնելու կամ այլ տարբերակված իրավական լուծում կիրառելու առումով:

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական դատավարության հատուկ հայցային վարույթով քննվող գնման վեճերի առանձնահատկություններին:

Գնման վեճերը վերաբերվում են ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային պայմանագրերով սահմանված գնման ընթացակարգերին:

Նշված ընթացակարգերն իրարից տարբերվում են հատուկ կանոնների առանձնահատկություններով:

Հոդվածում վերլուծության են ենթարկվել միջազգային պայմանագրերի կնքման, հաստատման և վավերացման ընթացակարգերը, ինչպես նաև դրանցից բխող՝ գնման գործընթացները միջազգային ընթացակարգերով իրականացնելու պարտադիրությունը:

Ներկայացվել են մի շարք ոլորտների զարգացման առնչությամբ Հայաստանի Հանրապետության և միջազգային տարբեր կառույցների միջև կնքված համաձայնագրերի օրինակները, որոնցով հստակ սահմանվել են գնման ընթացակարգերի իրականացման ձևերը:

Միաժամանակ, հոդվածում դիտարկվել են պետական գնման և միջազգային փաստաթղթերով իրականացվող գնման ընթացակարգերի տարբերությունները, ինչպես նաև դրանց վերաբերյալ վեճերի քննության առանձնահատկությունները, որոնք կարգավորված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի շրջանակում:

Նկատի ունենալով, որ պետական գնման ընթացակարգերով վեճերի քննության համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է հատուկ հայցային վարույթ, հոդվածում ներկայացվել են նաև դրանից տաբերվող՝ ընդհանուր հայցային վարույթի կարգով գնման վեճերի քննության դեպքերը:

Արդյունքում, առաջարկվում է դիտարկել օրենսդրական փոփոխություններ մշակելու անհրաժեշտությունը, որով կնախատեսվի առհասարակ ցանկացած տեսակի և ընթացակարգով գնման վեճերի քննման մեկ միասնական վարույթ կամ միջազգային ընթացակարգերով գնման վեճերի ընդհանուր հայցային վարույթից տարբերվող այլ կարգավորում:

Annotation. The article is devoted to the peculiarities of procurement disputes examined in the special claim proceedings of the civil procedure of the Republic of Armenia.

Procurement disputes relate to procurement procedures established both by the legislation of the Republic of Armenia and by international treaties.

It should also be noted that the mentioned procedures differ from each other in the peculiarities of special rules.

The article analyzes the procedures for concluding, approving, ratifying international treaties, and the obligation to implement the procurement processes arising from them through international procedures.

Examples of agreements concluded between the Republic of Armenia and various international organizations regarding the development of a number of sectors are presented, which clearly define the forms of implementation of procurement procedures.

At the same time, reference is made to the differences between state procurement and procurement procedures implemented by international documents, as well as the peculiarities of examining disputes regarding them, which are regulated within the framework of the Civil Procedure Code of the Republic of Armenia. Considering that the Civil Procedure Code of the Republic of Armenia establishes a special claim procedure for the examination of disputes under state procurement procedures, this article also presents cases of examination of procurement disputes under the general claim procedure, which differ from it. At the same time, it was proposed to consider the need to develop legislative amendments or supplements that would provide for a single unified procedure for the examination of procurement disputes of any type and procedure in general, or another regulation that differs from the general claim procedure for procurement disputes under international procedures.

Аннотация. Статья посвящена изучению особенностей споров о закупках, рассматриваемых в порядке особого искового производства гражданского судопроизводства Республики Армения.

Споры о закупках касаются процедур закупок, установленных как законодательством Республики Армения, так и международными договорами.

Следует также отметить, что указанные процедуры отличаются друг от друга особенностями специальных правил.

В статье анализируются процедуры заключения, утверждения, ратификации международных договоров и вытекающие из них обязательства по осуществлению процессов закупок посредством международных процедур.

Приведены примеры соглашений, заключенных между Республикой Армения и различными международными организациями относительно развития ряда отраслей, в которых четко определены формы осуществления процедур закупок.

При этом делается ссылка на различия между государственными закупками и процедурами закупок, реализуемыми международными документами, а также на особенности рассмотрения споров по ним, что регулируется в рамках Гражданского процессуального кодекса Республики Армения. Учитывая, что Гражданский процессуальный кодекс Республики Армения устанавливает особый претензионный порядок рассмотрения споров по процедурам государственных закупок, в настоящей статье также представлены отличающиеся от него случаи рассмотрения споров по закупкам в общем претензионном порядке. При этом было предложено рассмотреть необходимость разработки законодательных изменений или дополнений, которые предусматривали бы единый унифицированный порядок рассмотрения споров по закупкам любого вида и процедуры в целом, либо иное регулирование, отличающееся от общего претензионного порядка рассмотрения споров по закупкам в международных процедурах.

Բանալի բառեր *- գնումների վեճեր, պատվիրատու, մասնակից, պետական գնում, միջազգային ընթացակարգով գնում, գնահատող հանձնաժողով, լիազոր մարմին, քաղաքացիական դատավարություն, գնման գործընթացի կասեցում, հատուկ հայցային վարույթ:*

Keywords: *procurement disputes, client, participant, public procurement, international procurement, evaluation committee, authorized body, civil proceedings, suspension of the procurement process, special claim proceeding.*

Ключевые слова: *споры по закупкам, заказчик, участник, государственные закупки, международные закупки, оценочная комиссия, уполномоченный орган, гражданский процесс, приостановление процесса закупки, особое исковое производство.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Карапетов А.Г., Савельев А.И., Свобода договора и ее пределы: в 2 т. - М.: Статут, 2012. Т. 1. - 452 էջ:
2. Стурза К.И., Историко-правовой анализ развития института государственного заказа в России // История

государства и права. - 2013. - № 4. - 20-24 էջ:
3. http://www.parliament.am/draft_docs8/K-011_himnavorum.pdf
4. https://www.minfin.am/en/content/hamashkharhayin_bank_wb_/#sthash.pGTQujA1.dpbs
5. https://www.moh.am/#1/948
6. https://www.minfin.am/en/content/hamashkharhayin_bank_wb_/#sthash.pGTQujA1.dpuf
7. https://escs.am/am/news/7785
8. https://www.minfin.am/en/content/hamashkharhayin_bank_wb_/#sthash.pGTQujA1.BSfyNEgs.dpuf
9. https://armroad.am/am/search?keyword=%D5%A3%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80
10. https://www.irtek.am/views/act.aspx?aid=61651
11. https://www.arlis.am/hy/

Տեր-Պետրոսյան Ն. - «Դե Յուրե Քնսալթինգ» փաստաբանական և հաշտարարական գրասենյակի ղեկավար, «Դե Յուրե» իրավապաշտպան ՀԿ նախագահ, Մ. Մաշտոցի անվան համալսարանի դասախոս, էլփոստ՝ nazeliterpetrosyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրության 19.06.2025 թ., տրվել է գրախոսության 19.06.2025թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Թավադյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: